

ՄՊԻՏԱԿ ՏԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀՈՒՆԱԿԱՆ «KATHIMERINI» ԹԵՐԹԻՆ.
ԶՈ ԲԱՅԴԵՆԸ ՄՏԱԴԻՐ Է ՃԱՆԱԶԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20. 03. 2021

Վաշինգտոնի պատասխան-նամակը

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը, ինչպես խոստացել էր նախընտրական փուլում, մտադիր է ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ ևս մեկ անգամ հրահրելով լարվածությունն Թուրքիայի հետ հարաբերություններում:

Պատասխանելով «Կ.»-ի 37 սենատորների ուղերձին վերաբերող հարցին՝ կապված ցեղասպանության փաստը ճանաչելու նախագահին ուղղված խնդրանքի հետ, Սպիտակ տան ներկայացուցիչը նշել է. «Այս կառավարությունը պարտավորվել է նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և երաշխավորել, որ նմանօրինակ գազանություններն այլևս չեն կրկնվի, ինչը հնարավոր է պատմությունը ճանաչելով»:

Միջկուսակցական ուղերձում Մենատի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ Մենենդեսը, Հանրապետական և Ժողովրդավարական կուսակցությունների առաջնորդները վկայակոչում են Կոնգրեսի նախկին քվեարկությունները, որոնց շնորհիվ ճանաչվել է Հայոց ցեղասպանությունը:

2019 թ. դեկտեմբերին Մենատը միաձայն ընդունեց Մենենդեսի բանաձևը, որը հաստատում էր Հայոց ցեղասպանության պատմական փաստը՝ ընդգծելով, որ լռության է մատնվել Հայոց ցեղասպանության մասին ճշմարտությունը. «Կոչ ենք անում կոտրել այս մեղսակցության շարժառիթը՝ պաշտոնապես ճանաչելով Հայոց ցեղասպանությունը՝ որպես Ցեղասպանություն»:

Զուգահեռաբար վկայակոչվում է Բայդենի կառավարության պարտավորվածությունը՝ կառուցել ամերիկյան դիվանագիտությունը մարդու իրավունքների և համընդհանուր սկզբունքների հիման վրա:

Նախագահ Բայդենն իր նախընտրական փուլում խոստացել է որդեգրել այնպիսի քաղաքականություն, որը կճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Մենատորների ուղերձում ամրագրված է հետևյալը. «Մենատն արդեն իսկ պարզ է դարձրել իր դիրքորոշումը. ժամանակն է, որ գործադիր իշխանությունը վարվի նույն կերպ»:

Սպիտակ տունը ևս հաղորդում է մարդու իրավունքների պաշտպանության և նախընտրական հետևյալ խոստումի մասին. «Որպես նախագահի թեկնածու Ջո

Բայդենը հիշատակել է 1,5 մլն. հայ տղամարդկանց, կանանց և երեխաների մասին, ովքեր նահատակվեցին Օսմանյան կայսրությունում»:

Նա նաև նշել է. «Երբեք չպետք է մոռանանք և լռենք նման սարսափելի քարոզչության մասին, և միշտ կհիշենք այսպիսի մեծ ողբերգության հանդեպ հայ ժողովրդի դիմադրողականության մասին»:

37 սենատորների ուղերձը համաստրագրել են Հանրապետական կուսակցության այնպիսի հզոր դեմքեր, ինչպիսիք են Մարկո Ռոբինին, Միթ Ռոմնին, Թեդ Բրուզը և Սյուզան Կոլինսը, իսկ Ժողովրդավարական կուսակցության ներկայացուցիչներից՝ Բերնի Սանդերսը և Էմմի Կլոմբուսարը:

Արտաքին գործոց փոխնախարար Ուենդի Շերմանի թեկնածության դիմումը հաստատելուց հետո սենատոր Մենենդեսը հույս է հայտնել, որ նախագահ Բայդենը կպահպանի Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու՝ նախընտրական փուլի իր խոստումը:

Պարոն Մենենդեսի արտաքին քաղաքական նախաձեռնություններում կարտացոլվի մարդու իրավունքների պաշտպանությունը և կհամակարգվեն մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, էթնիկ զտումները և ցեղասպանությունները:

Դիմելով ամերիկյան դիվանագիտության նոր ղեկավարներին՝ նա նշել է. « Ձեր կողմից վկայակոչված արժեքները մեզ կոչ են անում ճանաչել ճշմարտությունը և անել ամեն ինչ, որպեսզի կանխենք հետագա ցեղասպանությունները և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները»: